

Հեթանոս երգերուն՝ ինչպես նախորդ գործերուն մեջ՝ Վարուժան հզորապես բնութեան զգացողութեամբ լեցուած հոգի մըն է: Քիչ կան էջեր ուր բնութիւնը իր շքեղ ամբողջութենէն մաս մը դրած չըլլայ բանաստեղծին գրչին տակ ու կամ չի ծառայէ իբր մտածումը կամ զգացումը լուսաւորող սեմաօլ մը: Ասիկա ազգային յատկանիշ մըն է է-ապես. դիտեցէք, տիկնայք եւ տեարք, մեր ժողովրդական բանահիւստութիւնը՝ որով կ'արբենանք քանի մը տարիէ ի վեր՝ շնորհիվ տաղանդաշատ Հայուն, որ հոս ներկայ է²⁴. նոյն իսկ մեր դասական նախնեաց գործերը ձեռք առէք՝ անոնց մէջ տեսնելու համար այն ինչ որ Վարուժանի մէջ կայ: Մեր ժողովրդական քերթութեան մէջ մանաւանդ՝ գրեթէ չիկայ տող մը որ սիրոյ կամ այն զգացմանց բնական նմանութիւն մը չընդխառնուի. ուրեմն ինչ որ կրնար թերութիւն համարուիլ Վարուժանի համար, իբր ծանրաց-նող իր ոճը, ցեղային յատկանիշ մըն է:

Միայն երբ շատ տեղ իրապաշտօրէն նկարագրական է բանաստեղծին ոճը՝ հոն հեծութիւն մը առաջ կուգայ, ոմանք զայն հակառակ կը գտնեն քերթութեան ոգւոյն՝ այն համոզմամբ թէ՝ բանաստեղծութիւնը պէտք է ըլլայ, եթէ դիւցազնական կամ պատմական չէ, իրերուն եւ զգացման մէկ ցուքը՝ չէ թէ անոնց իսկական նկարը: Սխալ չէ այս դիտողութիւնը: Բայց անմիջապէս աւելցնենք որ Վարուժանի գործերուն մէջ եթէ մեծ է նկարագրական երակը, փոքր չեն համադրական ոգւով եւ գոյնով էջերուն թիւը:

Գալով Վարուժանի արուեստին՝ *Սարսուռներու* փոքր թարթափումէն վերջ՝ *Յեղին սիրտը*ին մէջ՝ գրեթէ տիրացած է անոր, իսկ *Հեթանոս երգերուն* մէջ արդէն իսկ տէրն է: Հաւասարապէս ոտանաւորի ամէն ձեւ իր այլազան մտածմանց իբր հագուստ կ'առնէ ու մանաւանդ իր լեզուին մէջն է այդ արուեստը: Գրագէտ բարեկամներէս մին կ'ըսէր անցեալ օր. «Կ'արժէ հայերէն լեզուն սորվիլ՝ Վարուժան կարդալու համար»: Վարուժան երանգի, շարժման, ու յաճախ ներդաշնակութեան բանաստեղծն է: